* * *

Հայաստանի հանրակրթական համակարգի վերափոխման հիմնադրույթների մշակումն իսկ, բացահայտելով ծրագրի գիտական, քաղաքական, իրավական, կազմակերպական-ֆինանսական, հոգեբանական, նույնիսկ ժողովրդագրական ապահովման անհրաժեշտությունը, ուրվագծում է այն մեծածավալ, երկարաժամկետ և ոչ դյուրին աշխատանքների տարրապատկերը, որոնց իրականացումը ի վերջո պիտի հանգեցնի ազգային հանրակրթական համակարգի գործառմանը:

Սակայն դրա համար բավարար չեն լոկ տեսական մշակումները: Ավելին՝ առանց այդ համակարգի համապարփակ, մանրակրկիտ մշակման և վերափոխումների իրականացման մեխանիզմների ստեղծման վտանգավոր է ձեռնարկել բուն գործը: Իսկ դրանք հանգում են հետևյալին.

ա) Հայաստանում և Սփյուռքում հանրակրթության արդի վիճակի վերլուծում և զարգացման հնարավորությունների ուսումնասիրում:

բ) Համաշխարհային փորձի (հատկապես հայահոծ համայնքներ ունեցող երկրների) հանգամանալի ուսումնասիրում և վերլուծում:

գ) Առաջարկվող միջոցառումների հետևանքների գիտական կանխատեսում:

դ) Համապարփակ մոդելների կառուցում և ուսումնասիրում:

ե) Համազգային հաղորդակցական-տեղեկատվական մեխանիզմի ստեղծում. այս առումով կարևորվում է հանրակրթության և համալսարանական կրթության սերտացումը՝ մեխանիզմի գործողության որոշակի պատասխանատվություն դնելով վերջինիս վրա, ինչպես նաև ներազգային կրթական համակարգչային ցանցերի ստեղծումը և հեռավորական ուսուցման կազմակերպումը:

զ) Հայրենիքի և Սփյուռքի այս գործի պատասխանատուների ու նախանձախնդիրների ջանքերը միատեղող աշխատանքային մարմնի հիմնում:

Այսպիսով՝ Հայաստանի հանրակրթական համակարգի վերափոխման այլընտրանքային ծրագիրը կոչված է նպաստելու ազգայնամետ զարգացման ներունակ համակարգի ձևավորմանը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. ՀԱՅՔ հաստատություն, Տեղեկագիր, թիվ 11, 1994, թիվ 14, 1996:
2. Հայաստան. մարդկային զարգացման զեկույց. Եր., 1995, Եր., 1996:
3. Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության բարեփոխման ուղենիշներ, Եր., 1995:
4. Սփյուռքահայ վարժարանների համաժողովի նյութեր, Նիցցա (Ֆրանսիա), 1996:
5. Tacis EES-Education Policy Advice-Armenia, Expert Report, 1996.
6. Образование в регионе Европы и Средней Азии, 1994.
7. Ամերիկա-2000. Կրթության ստրատեգիա, 1991:
8. Образование в современном мире, М., 1986.

Ծրագիրը մշակված է
ՀԱՅՔ հաստատության
թիվ 6 ծրագրի շրջանակներում:

Ծրագրի հեղինակներ՝

ԷԴՈՒԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆ,
ԱԼԲԵՐՏ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ,
ԺԱՍՄԵՆ ԱՂԱՍՅԱՆ

«Հայաստանի հանրակրթական համակարգի վերափոխման այլընտրանքային ծրագրում» հանրապետության միջնակարգ դպրոցի զարգացման հիմնահարցերը դիտարկված են համազգային տեսանկյունով: Նրա նպատակներն են՝ հայ ազգի հոգեմտավոր ներուժի ձևավորման մեջ կրթության կարևորագույն խնդիրների տեսանելիացումը, հայկական կրթական հաստատությունների գործառության ուղղորդումը ազգային ռազմավարության հունով և ազգային ու համամարդկային արժեքների վրա հիմնված հանրակրթության վերածումը միջազգային չափանիշներին համապատասխան ու, բնականաբար, հայության համար մատչելի համակարգի:

Ծրագիրը կոչված է նպաստելու ազգայնամետ զարգացման և հնարավոր հանձնառության ներունակ հանրակրթական համակարգի ձևավորմանը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Նախաբան ..... 4

Բաժին Ա

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ..... 5

Բաժին Բ

*I. ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ* ..... 8

*II. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ* ..... 9

*III. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ* ..... 9

*IV. ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ* ..... 10

1. Կրթության ավանդական արժեքների պահպանում
   և նոր արժեքների ներածում ..... 10
2. Հայագիտական առարկաների շարքի համազգային
   կրթական ծրագրի մշակում ..... 11
3. Դասագրքերի նորացում.
   բովանդակության մեջ ազգային ինքնիմացության ներածում ..... 13
4. Դաստիարակության նոր հայեցակարգի մշակում և գործառում ..... 14
5. Մանկավարժական կրթության համալսարանացում ..... 15
6. Ոչ լրակազմ դպրոցները որպես ժողովրդագրական
   հիմնահարցի կրթական բաղադրիչ ..... 16
7. Ներազգային ու միջազգային հաղորդակցության հիմքի ապահովում ..... 18
   ա) Օտար լեզուների ուսուցում ..... 18
   բ) Համակարգչային գրագիտություն ..... 18
   գ) Կրթության էկոլոգացում ..... 19

*V. ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ* ..... 20

Գրականություն ..... 21

# Նախաբան

Ազգային ինքնագիտակցության վերելքը և անկախ պետականության կերտումը որոշակիորեն վերափոխում են հայ կյանքի կարևորագույն հիմքերը հայրենիքում թե Սփյուռքում: Դրանց մեջ նոր սոցիալ-քաղաքական և պատմամշակութային, ինչպես նաև ազգերի զարգացման գործընթացում 21-րդ դարի շեմին կրթության, գիտության և տեխնոլոգիայի դերի բարձրացման պայմաններում ռազմավարական նշանակություն է ձեռք բերում կրթությունը մի շարք առումներով.

Ա. 21-րդ դարում ազգերի բազմաբնույթ մրցակցության մեջ հայ ազգի վերապրումի և զարգացման երաշխիքը դառնալու է նրա հոգեմտավոր ներուժը. հայության այս տարացրիվ հարստության պահպանումը, ինտեգրացումը և հետագա զարգացումը ակնկալվում են կրթության հիմքի վրա:

Բ. Համաշխարհային ընկերակցության մեջ Հայաստանի կենսունակ ինտեգրացման և հայ անհատի բարեկեցության հիմքը նույնպես կազմելու է կրթությունը:

Երկու հանգամանքն էլ անհրաժեշտ են դարձնում՝

ա) միատեղել և միասնացնել կրթության ազգային արժեքները, քանզի «կրթության ու պատրաստության բոլոր տեսակներն ու ձևերը ազգային մասշտաբով մի ամբողջություն են» (Քինգ),

բ) ներդաշնակել ազգային և համամարդկային արժեքները:

Գ. Կրթությունը ազգային մշակույթի զարգացման և ազգային կերպարի ու էության կռվան է: Իսկ քանի որ հայության համար մշակույթը դառնում է մրցակցության բուն ասպարեզ, ապա կրթությունը վերածվում է ազգային քաղաքականության գերակա ոլորտի: Մեր կոտորակված մշակույթը, կերպարը, արժեքներն ու հավատամքը կրթության շնորհիվ պիտի վերածվեն համազգային արժեքների ու էության ամբողջականության, որի կրողը լինելու է նոր սերնդի հայը: Այդ բոլորի ամբողջականացումը պիտի ապահովի նրա զարգացման նոր փուլը՝ հայության ապագա սերնդին դարձնելով միասնական անցյալի ժառանգորդը և միասնական գալիքի հանձնառուն:

Կրթությանը վերապահվող դերը հիմնականում բաշխվում է դպրոցի և համալսարանի միջև:

Դպրոցի հանձնառությունը մեկնելի են դարձնում մի շարք հանգամանքներ.

1. Մարդն իբրև անձ և իբրև էթնոկիր հիմնականում ձևավորվում է հանրակրթության մակարդակում.

2. Բոլոր էթնոկիրներն անցնում են սոցիալականացման այս փուլը.

3. Հայ համայնքների համար դա ամենամշակված և գործուն կառույցներից է. ստեղծված են ավանդույթներ, և արդեն զգալի են ինտեգրացման միտումներ.

4. Ժամանակակից աշխարհաքաղաքական բարդ պայմաններում կրթությունը հարաբերվելու հարմար, հնարավոր և պարտադիր ոլորտ է.

5. Սփյուռքում հայերենով բարձրագույն կրթության պակասը մեզ համար հայեցի կրթության նվազագույն է հաստատագրում հանրակրթությունը:

Նշված նկատառումները տեսանելի են դարձնում ապագայի համահայկական կրթական կառույցը, որի կենտրոնը, բնականաբար, կարող է դառնալ հանրապետության կրթական համակարգը: Այդ կառույցի հիմնարկմանն է միտված «Հայաստանի հանրակրթական համակարգի վերափոխման այլընտրանքային ծրագիրը», որում փորձ է արվում հանրապետության միջնակարգ դպրոցի զարգացման հիմնախնդիրները դիտարկել համազգային և հեռանկարային տեսանկյունով: Հայաստանում հանրակրթությունը, զարգանալով իբրև ամբողջական համակարգ, միաժամանակ պիտի հիմնվի այնպիսի արժեքների վրա և ուղղորդվի այնպես, որ ներունակ լինի հնարավոր հանձնառության:

# Բաժին Ա

## ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Մեզանում հանրակրթությունը բնութագրվում է ըստ կրթական տարածույթների:

*ա) Հայաստանում*

Հանրապետությունում անվճար միջնակարգ կրթությունը մատչելի է յուրաքանչյուր երեխայի համար: Ընդհանուր միջնակարգ կրթությունն իրականացվում է ցերեկային, երեկոյան և գիշերօթիկ դպրոցներում, մտավոր և ֆիզիկական զարգացման հապաղումներ կամ շեղումներ ունեցող երեխաների համար հատուկ դպրոցներում և կրթական հիմնարկներում:

Հանրակրթական դպրոցն ունի եռաստիճան կառուցվածք. տարրական դպրոց՝ I-IV, միջին դպրոց՝ V-VIII, ավագ դպրոց՝ IX-X դասարաններ:

Պարտադիր միջնակարգ կրթության իրականացման հետևանքով որակապես փոխվել է դպրոցական ցանցի կառուցվածքը. 1970թ. համեմատությամբ 1994թ. տարրական դպրոցների թիվը կրճատվել է ավելի քան 6.4 անգամ, իսկ ոչ լրիվ (8-ամյա) միջնակարգ դպրոցների թիվը՝ մոտ 2,6 անգամ:

Վերջին տարիներին Հայաստանի հանրակրթական համակարգը գտնվում է բովանդակային և կառուցվածքային արմատական փոփոխությունների դժվարին փուլում:

Դպրոցականների թիվը վերջին երկու տարվա ընթացքում նվազել է մոտ 3,1%-ով, որից քաղաքներում՝ 2,6%-ով: Ավագ դպրոցում զգալիորեն աճել է աղջիկների թիվը (1995թ. տվյալներով՝ մոտ 55,5%): Բերված փաստերը հիմնականում հանրապետությունից բնակչության որոշակի մասի արտագաղթի, ինչպես նաև պատանիների՝ ընտանիքի տնտեսական հոգսերի ոլորտ վաղաժամ ընդգրկվելու հետևանք են:

Գյուղական բնակավայրերի դպրոցներում 1980թ. մինչև 1990թ. սովորողների թիվն աստիճանաբար կրճատվել է և ապա սկսել աճել: Այդ աճը մասամբ բացատրվում է լքված գյուղերի հողի սեփականաշնորհմամբ պայմանավորված վերաբնակեցումով, ինչպես նաև ներհանրապետական գաղթային գործընթացներով՝ իբրև հետևանք քաղաքային կյանքի կենցաղային, տնտեսական և ֆինանսական դժվարությունների: Դպրոցներում ցածր են դասարանների միջին խտությունը, բարձրագույն կրթությամբ մանկավարժների տոկոսը և դասագրքերով ապահովվածությունը:

1989թ. հանրապետությունում գործում են նոր տիպի ուսումնական հաստատություններ՝ քոլեջ, վարժարան, ավագ դպրոց-վարժարան, ճեմարան, ակադեմիական դպրոց, որոնցում իրականացվում է տարբերակված հոսքային ուսուցում՝ ըստ սովորողների հակումների և նախասիրությունների, ինչպես նաև կիրառվում են մանկավարժական նոր մոտեցումներ և մեթոդներ: Հիմնական հոսքերն են՝ ընդհանուր հանրակրթական, հումանիտար, բնագիտական, ճարտարագիտական, ֆիզիկամաթեմատիկական, արհեստագործական: Որոշ դպրոցներ անցել են ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման ինքնուրույն ձևերի: Սակայն վերջին հինգ տարիների ընթացքում կրթության ոլորտի վերափոխումներին վերաբերող որևէ օրենք չի ընդունվել, ուստի ուսուցման նոր ձևեր դեռ չեն ներդրվել:

Միջնակարգ մասնավոր կրթությունը գտնվում է սաղմնային վիճակում: 1995թ. հանրապետությունում գործել է ընդամենը 8 մասնավոր կրթօջախ՝ մոտ 700 աշակերտով: Այսպիսի վիճակը հետևանք է մասնավոր կրթության բնագավառի գործունեությունը կարգավորող օրենքների և իրավական այլ փաստաթղթերի բացակայության, ինչը բերում է քաոսային, քողարկված անցման վճարովի ուսուցման: Պետական չափորոշիչների բացակայությունը նույնպես լուրջ խոչընդոտ է կրթության մասնավոր հատվածի զարգացման ճանապարհին: Այն սահմանափակում է անհատի՝ կրթական շուկայի ընձեռած ընտրության հնարավորությունից օգտվելը:

Էապես փոխվել է կրթության բովանդակային կողմնորոշումը: Նորացվել է կրթության հումանիտար հատվածը (պատմություն, հայոց պատմություն, հայ և համաշխարհային գրականություն, հասարակագիտություն և այլն), ստեղծվել են նոր ծրագրեր և դասագրքեր՝ ազգային ավանդույթների ու համաշխարհային փորձի ներդաշնակ հաշվառման սկզբունքով և զերծ գաղափարական կաղապարներից:

Հայաստանի և Արցախի մի շարք, այդ թվում և կրթական, համակարգերի շարունակվող ինտեգրացումը նույնական փոփոխությունների է ենթարկում Արցախի դպրոցը, որն ընդգրկում է 148 հաստատություն՝ 22 հազ. աշակերտով:

Հանրակրթական դպրոցների ուսուցիչների կրթական մակարդակն ունի հետևյալ պատկերը: 80-ական թթ. սկզբից բարձրագույն կրթությամբ ուսուցիչների թիվը գերազանցում է նրանց ընդհանուր թվի 80%-ը, սակայն այն քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև բաշխված է անհավասարաչափ: 1988 թվից գյուղական բնակավայրերում աշխատում է բարձրագույն կրթությամբ երկիցս պակաս թվով ուսուցիչ:

Հանրապետության մանկավարժական համակազմի համար բնութագրական է ֆեմինացման բարձր աստիճանը: Եթե 1970թ. կանայք կազմում էին ուսուցիչների ընդհանուր թվի 60,6%-ը, ապա 1991թ.՝ արդեն 75%-ը, իսկ քաղաքային բնակավայրերում՝ ավելի քան 80%-ը:

Նման միտման հիմնական պատճառը ուսուցիչների սոցիալական անապահովվածությունն է: Հայաստանի տնտեսության 14 հիմնական ճյուղերի շարքում կրթության բնագավառը միջին ամսական աշխատավարձի չափով զբաղեցնում է վերջին տեղերից մեկը: Հիմնականում այս պատճառով ուսուցիչները, և հատկապես տղամարդ ուսուցիչները, լուսավորության բնագավառից հեռանում են տնտեսության այլ ճյուղեր, իսկ մանկավարժական բուհերի շատ շրջանավարտներ խուսափում են ուսուցչական աշխատանքից:

Ընդհանուր միջնակարգ կրթության համակարգի կարևոր մասն է արտադպրոցական դաստիարակության համակարգը, որի գործունեության նպատակն է երեխաների ազատ ժամանակի արդյունավետ կազմակերպումը և մասնագիտական կողմնորոշման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

1988թ. երկրաշարժից առաջ արտադպրոցական հիմնարկներում ընդգրկված էր հանրապետության աշակերտության 16,7%-ը: 1993թ. 1990թ. համեմատությամբ զգալիորեն նվազել էր արտադպրոցական կրթության և դաստիարակության համակարգում զբաղված մանկավարժների թիվը (մոտ 3000):

Հանրապետությունում արտադպրոցական հիմնարկները տեղաբաշխված են անհավասարաչափ: Արտադպրոցական հիմնարկներ չկան մի քանի մարզերում, մյուսներում գործում են միայն մանկապատանեկան ստեղծագործության կամ բնապահպանական կենտրոններ: Շուկայական հարաբերություններին բնորոշ մրցակցությունը, ազատ ընտրության հնարավորությունը, անձի հետաքրքրությունների շրջանակի ընդլայնումը և լրացուցիչ կրթություն ստանալու ձգտումը ենթադրում են արտադպրոցական գործունեության նկատմամբ պահանջարկի աճի միտում:

Վերջին տարիներին Հայաստանի սոցիալ-տնտեսական դժվարին կացությունը պատճառ է դարձել նաև կրթության որակի էական անկման: Ցրտերի պատճառով ուսումնական տարվա և դասաժամերի տևողության կրճատումը, լավագույն ուսուցիչների հեռանալը, դասագրքերի, մեթոդական և օժանդակ գրականության պակասը, գրենական պիտույքների թանկությունը և այլ հանգամանքներ անհնար են դարձրել ուսումնական պլանների իրագործումը: Չնայած դպրոցների ջեռուցման գործում մի շարք արտասահմանյան ոչ կառավարական կազմակերպությունների օգնությանը՝ պետությունն ի վիճակի չէ ապահովելու բնականոն ուսումնական գործընթաց մոտ 3-4 ամսվա ընթացքում, և հարկադրական արձակուրդներին շատ աշակերտներ զբաղվում են ինքնակրթությամբ: Ծանր վիճակում է գտնվում դպրոցների նյութատեխնիկական բազան, շինությունները չեն նորոգվում, և նրանց հետագա շահագործումը դառնում է վտանգավոր:

Նշված հիմնախնդիրներն անհրաժեշտ են դարձնում հանրապետության հանրակրթական համակարգի վերափոխման համապարփակ ծրագրի մշակումը:

*բ) Սփյուռքում*

Արտաքին Սփյուռքում գործում է 161 հայկական ամենօրյա վարժարան, որոնցում, մոտավոր գնահատումով, սովորում է 41500 աշակերտ[1]: Սփյուռքահայության թվի հետ (մոտ 3 միլիոն) այս տվյալի համեմատությունը պարզում է, որ 1000 հային բաժին է ընկնում 13 աշակերտ, որն, անշուշտ, շատ փոքր թիվ է: Այս հարաբերությունը համեմատաբար մեծ է Ստամբուլում՝ 1000:100:

Ներքին Սփյուռքում (նախկին Խորհրդային Միության տարածքում) գործող հայկական դպրոցների, ինչպես նաև այլ տեսակի հայկական կրթօջախների վերաբերյալ կան հետևյալ տվյալները:

<u>Հայկական դպրոցներ.</u> Վրաստան՝ 156 դպրոց, 30 հազ. աշակերտ, Աբխազիա՝ 20 - 3,9 հազ.[2], Ռուսաստանի Դաշնություն (Կրասնոդարի երկրամաս, ք. Սոչի)՝ 6 - 1000: Ընդամենը՝ 182 - 35 հազ.:

[1] Սփյուռքահայ վարժարանների համաժողովի նյութեր, Նիցցա (Ֆրանսիա), 1996թ. հունիսի 7 - 9:

[2] Այսուհետև համապատասխանաբար տրվում են դպրոցների թիվը և աշակերտների համակազմը:

Հայոց լեզվի ուսուցման հիմնական և նախասիրական դասաժամեր ունեցող դպրոցներ. Կրասնոդարի երկրամաս՝ 48-4050, Ստավրոպոլի երկրամաս՝ 7-690, Ռոստովի մարզ՝ 8 - 2250, Հյուսիսային Օսեթիա՝ 1 - 420, Մոսկվա՝ 1 - 420: Ընդամենը՝ 65 - 7490:

Կիրակնօրյա հայկական դպրոցներ. Ռուսաստանի Դաշնություն. Կրասնոդարի երկրամաս՝ 6 - 115, Ստավրոպոլի երկրամաս՝ 4 - 205, ՌԴ այլ տարածքներ՝ 12 - 475, ընդամենը՝ 22 - 795, Ուկրաինա՝ 10 - 490, Մոլդովա՝ 2 - 50, Բելառուս՝ 1 - 20, Էստոնիա՝ 2 - 45, Լատվիա՝ 1 - 30, Լիտվա՝ 1 - 40, Ուզբեկստան՝ 2 - 70, Ղազախստան՝ 1 - 20, Թուրքմենստան՝ 1 - 20, ընդամենը՝ 43 - 1580:

Այսօր Սփյուռքում հայ դպրոցի համար առաջնահերթ են հետևյալ հիմնախնդիրները.

1. Հնարավորինս մեծ թվով երեխաների համար հայերենով տրվող կրթության կազմակերպում:
2. Հայերեն (հիմնականում՝ արևմտահայերեն) դասավանդող արհեստավարժ ուսուցիչների պատրաստում:
3. Հայերենի ուսուցման արդիական մեթոդի ստեղծում:
4. Հայերենի պահպանում:
5. Ժամանակի պահանջներին համապատասխան հայերեն դասագրքերի ստեղծում և հրատարակում, արտադասագրքային արդիական օգտաշատ միջոցների (համակարգչային խաղերի, ձայներիզների, պատկերիզների և այլնի) ստեղծում:
6. Սփյուռքահայ դպրոցների ինտեգրացում:

Այսպիսով՝ կրթական տարածություններում տարբեր են հանրակրթության վիճակը և հիմնախնդիրները: Վերջիններիս լուծումը և հայության հանրակրթական հնարավորինս միասնական պատրաստության ապահովումը առաջնահերթ են դարձնում Հայաստանի կրթական համակարգի՝ իբրև ստեղծվելիք ազգային կրթական համակառույցի կենտրոնի զարգացումը: Այդ նկատառումով հանրապետության կրթական համակարգի զարգացման ծրագիրը պիտի մշակվի համազգային ընդգրկումով. նրանում արծարծվող հիմնախնդիրներն արդիական են նաև Սփյուռքի համար, և հիմնադրույթները հասցեագրվում են առհասարակ հայկական կրթական հաստատություններին: Նպատակը բնավ սփյուռքահայ հաստատությունները Հայաստանի օրինակով վերաձևելը չէ, այլ նրանց բոլորի համար ազգի հոգեմտավոր ներուժի ձևավորման մեջ կրթության կարևորագույն խնդիրների տեսանելիացումը, կրթօջախների գործառության ուղղորդումը ազգային ռազմավարության հունով և Հայաստանի կրթական համակարգի վերածումը միջազգային չափանիշներին համապատասխան ու, բնականաբար, հայության համար մատչելի համակարգի:

## Բաժին Բ

# I. ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ազգային կյանքի բոլոր բնագավառները՝ պաշտպանությունից մինչև տնտեսական, սոցիալական ու քաղաքական ոլորտներ, հոգեմտավոր ժայթքումների կարիք ունեն և պահանջում են հայության համընդհանուր կրթական բարձր մակարդակ: Միայն այս պարագայում հնարավոր կդառնա ապահովել գիտության, մշակույթի և արտադրության այնպիսի զարգացում, որը երաշխավորի հայ անհատի և ազգի գոյատևումը, զարգացումը, բարեկեցությունն ու զորացումը: Աշխարհում գործուն է ազգի միայն արդի ներուժը, մրցունակ է միայն այսօրվա ներդրումը, և եթե մտադիր ենք հավասարի իրավունքով գործակցել այլ ազգերի հետ ու իրագործել մեր առաքելությունը մարդկային քաղաքակրթության մեջ, պարտավոր ենք պահպանել, ինտեգրացնել ու զարգացնել այդ ներուժը: Ուստի վերափոխման առաջին նպատակը հանգում է <u>հայության ընդհանուր կրթական բարձր մակարդակի՝ որպես հայ անհատի ու ազգի գոյատևման և զարգացման հիմքի ապահովմանը</u>:

Սակայն նման մակարդակ հնարավոր չէ ապահովել հանրակրթության թե՛ նախկին (խորհրդային) և թե', առավել ևս, ներկա, անվերջ «կուտ գնացող» համակարգով: Այսօր կրթական ճգնաժամ է ոչ միայն մեզանում. այն համընդհանուր է: Ուստի վերափոխման երկրորդ նպատակը դառնում է <u>ճգնաժամի հաղթահարումը</u> և <u>կրթության մոտիվացիայի խթանումը</u>:

Ուսման նկատմամբ հետաքրքրության կորուստը բացատրվում է մի շարք հանգամանքներով, որոնցից հարցի քննարկման տեսանկյունով կարևորվում են երկուսը.

ա) Ժամանակակից կրթական համակարգերը, նաև հայկականը, հասարակության պահանջմունքները բավարարելու իրենց ուղղվածությամբ հանրակենտրոն են և շրջանցում են մարդուն՝ իր հակումներով ու նախասիրությամբ: Կրթության անհատականացման շնորհիվ հայ դպրոցը պիտի վերածվի եսակենտրոն համակարգի՝ խնդիր ունենալով երեխայի մաթեմատիկական ու լեզվական մտածողության ձևավորումը, նրա բնատուր ընդունակությունների զարգացումը և նախասիրությունների բավարարումը:

բ) Կրթության մոտիվացիայի անկումը կապվում է նաև մշակույթի ճգնաժամի հետ: Կրթության փիլիսոփաները չեն բացառում, որ սեփական մշակույթի զարգացման տրամաբանությունից շեղվելու և մշակույթի մեջ հոգևոր չափման կորստի պատճառով մարդկությունը զրկված է նոր վիճակի անցնելու հնարավորությունից: Այսպիսով՝ ուսումնատենչություն արթնացնելու գործում ամենահզոր է դիտվում ազգային մշակութային գործոնը: Դպրոցը պիտի դառնա ազգային ավանդույթների, մտածելակերպի ու մշակույթի կրողը, համազգային շահերի արտահայտիչը: Հանրակրթության նոր համակարգի հիմքում պետք է դրվեն մշակութային հարստությունը և արժեքները:

Պատմամշակութային մի շարք արժեքներ՝ ազատասիրություն, ստեղծագործելու անսպառ ունակություն և ստեղծագործական յուրացման ձիրք ու ինքնատիպություն, սեր գրի ու դպրության նկատմամբ, կարեկցանք ու այլասիրություն, որ կազմում են մեր տոհմիկ նկարագիրը, համամարդկային հնչողություն ունեն: Ուստի ժամանակակից հայի համար նախապատվելի են նոր քաղաքակրթության մի շարք արժեքներ՝ էկոլոգիական մտածողություն, ուրիշների Ես-ի անպայման ընդունում, հարգանք օտարի, գերազանցի նկատմամբ և այլն: Դեպի ազգային ու համամարդկային արժեքները կողմնորոշված հանրակրթությունը, հայության նոր սերնդին ձերբազատելով ազգային թերարժեքության և այլ բարդույթներից, ապահովելու է երիտասարդ սերնդի կրթամշակութային որոշակի ընդհանուր մակարդակ՝ հնարավոր դարձնելով կրթության ոլորտում նրա ինտեգրացումը:

Այսպիսով՝ <u>հանրակրթության՝ որպես ազգային համընդհանուր սոցիալականացման հիմքի ուղղորդված զարգացումն ակնկալելի է դարձնում հայության ներազգային նախնական ինտեգրացումը</u>՝ իբրև կրթության ազգային կարևորագույն խնդիր:

Կրթության խնդիրները լուծելիս պետք է նկատի առնել, որ հայության համար արդիական է նաև տեղային ինտեգրացումը՝ պայմանավորված Հայաստանում փախստականների հիմնահարցով, Սփյուռքում՝ համայնքների անընդհատ փոփոխությամբ և առհասարակ հայ բնակչության գերշարժունությամբ:

## II. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Նախանշված նպատակներն իրականացնելիս կրթական քաղաքականությունը խարսխվում է հետևյալ հիմնակազմ սկզբունքների վրա.

1. Սոցիալ-քաղաքական.
ա) ազգի նկատմամբ պատասխանատվություն,
բ) կրթության գերակայություն և առաջանցիկ զարգացում,
գ) կրթության մարդասիրական և աշխարհիկ բնույթ,
դ) ազգայինից դեպի համամարդկայինը,
ե) կրթության մենաշնորհի բացառում. այլընտրանքային կրթության ապահովում,
զ) կրթության կառավարման ժողովրդավարացում,
է) կրթական հաստատությունների անկախություն հասարակական-քաղաքական կազմակերպություններից, կուսակցություններից և շարժումներից:

2. Կառուցվածքային-բովանդակային.
ա) կրթության կառուցվածքի և բովանդակության ճկունություն,
բ) կրթության բազմաստիճանություն և բազմաձևություն (տարբերացում),
գ) կրթական աստիճանների գործառման հաջորդայնություն (ինտեգրացում),
դ) շարունակական կրթության ապահովում,
ե) կրթության եսակենտրոնություն. անհատի ընդունակություններին ու նախասիրություններին հագուրդ տվող, մասնագիտական կարիերան ու նյութական բարեկեցությունը երաշխավորող կրթության ապահովում,
զ) կրթության էկոլոգացում,
է) կրթության հիմնարարություն, հանրագիտայնություն և ազատականություն,
ը) անձի մտավոր և հոգևոր զարգացման զուգորդում:

## III. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### Ա. Կառուցվածքը

Հանրակրթության ծրագրերն իրագործվում են եռաստիճան դպրոցում. տարրական դպրոց (քառամյա ուսուցում). իրագործում է տարրական կրթության ծրագիրը, միջին դպրոց (քառամյա ուսուցում). իրագործում է հիմնական միջնակարգ կրթության ծրագիրը, ավագ դպրոց (երկամյա ուսուցում). իրագործում է լրիվ միջնակարգ կրթության ծրագիրը. ունի հետևյալ տարատեսակները՝ ընդհանուր հանրակրթական, բնագիտական, ճարտարագիտական, հումանիտար, ֆիզիկամաթեմատիկական և արհեստագործական:

Առաջին երկու աստիճանները կազմում են հիմնական դպրոցը, որում իրականացվում է պարտադիր ութամյա կրթություն:

Եռաստիճան կառուցավորումը ենթադրում է տարրական, միջին և ավագ դպրոցների՝ իբրև ինքնավար միավորների գործառություն: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր նպատակները, ուսումնական ծրագրերն ու ուսուցման մեթոդները, բնականաբար և համապատասխան մանկավարժական կադրերը:

### Բ. Բովանդակությունը

Հանրակրթության հիմնական խնդիրներն են՝ ձևավորել ազգային մշակութային ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրող և քաղաքացիական գործուն դիրքորոշում ունեցող երիտասարդության նոր սերունդ, սովորողներին տալ բնության, հասարակության, տեխնիկայի և արտադրության մասին խոր, հիմնարար գիտելիքներ, նպաստել նրանց մտավոր, հոգևոր, մասնագիտական, գեղագիտական և ֆիզիկական զարգացմանը, հիմք ստեղծել անընդհատ կրթության համակարգում նրանց ինքնակրթության և ինքնազարգացման համար: Իսկ ըստ հանրակրթության աստիճանների դրանք բաշխվում են այսպես.

ա) Տարրական կրթության ծրագիրը նախատեսում է՝ հայ անհատի բնականոն զարգացումն ապահովող լեզվական մտածողության և մաթեմատիկական տրամաբանության հիմքերի, ուսումնառության

և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորում և կարողությունների բացահայտում, հաղորդակցում ազգային և համամարդկային արժեքներին: Այս խնդիրներն ակնկալվում է լուծել երեխայի նշված որակները մշակելու ունակ դասվարների պատրաստությամբ:

բ) Հիմնական միջնակարգ կրթության ծրագիրը նախատեսում է՝ սովորողների կողմից աշխարհի և բնության գիտական պատկերի, բնության մեջ մարդու տեղի և դերի մասին համակարգված գիտելիքների ձեռքբերում, էկոլոգիական մտածողության և մարդու առողջության պահպանման նկատմամբ պատասխանատվության զգացման ձևավորում, ինքնուրույն ստեղծագործ աշխատանքի, կրթական և հասարակական գործունեության համար անհրաժեշտ միջնակարգ կրթության նվազագույնի ապահովում:

Նշված որակների ձևավորման միջոցներից են ինտեգրացված բնագիտական դասընթացները, որոնց հիմքում ընկած է մարդու՝ բնության և իր նմանի հետ ներդաշնակ հարաբերությունների վերականգնման սկզբունքը:

գ) Լրիվ միջնակարգ կրթության ծրագիրը նախատեսում է՝ հենքային հանրակրթական պատրաստություն, կրթության տարբերացում և անհատականացում՝ սովորողների հակումներին և կարողություններին համապատասխան բնագիտամաթեմատիկական, ճարտարագիտական և հասարակագիտական խոր, կայուն գիտելիքների կամ արհեստագործական կարողությունների ու հմտությունների ձեռքբերում՝ բարձրագույն կրթություն ստանալու կամ արտադրության մեջ աշխատելու նպատակով:

## IV. ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

### 1. Կրթության ավանդական արժեքների պահպանում և նոր արժեքների ներածում

Հայաստանի հանրակրթական համակարգի վերափոխման կարևորագույն հարցը հնի ու նորի նպատակամետ զուգորդումն է:

Նախկին համակարգի հիմնակազմ որակների պահպանումը պայմանավորված է երկու կարևոր հանգամանքներով:

Ա. Խորհրդային կոչվող համակարգն ուներ մի շարք առավելություններ, որոնցից կարևորվում են հատկապես հիմնարար պատրաստության բարձր մակարդակը և հանրագիտայնությունը: Դրանք հանրակրթական համակարգի տևական զարգացման ձեռքբերումն են և հանրապետության կրթական արժեքների մասն են կազմում: Հայաստանի անկախացումից հետո կրթահամակարգի պարբերաբար ձեռնարկվող վերափոխումները, պայմանավորված նաև երկրի սոցիալ-տնտեսական կացությամբ, վտանգել են կրթության այս որակների ժառանգումը:

Մինչդեռ ժամանակը խիստ արժևորում է նշված հատկանիշները, առավել ևս՝ ապագայի տեսանկյունով: Սրընթաց աճող տեղեկատվության պայմաններում հնարավոր չէ անվերջ ավելացնել տրվող գիտելիքների ծավալը: Ընդհակառակը, այն ավելի տրամաբանական է դարձնում հիմնարար կրթությունը, որի նպատակը պիտի լինի աշակերտներին սովորեցնել մտածել գիտականորեն, յուրացնել նոր գաղափարներ:

Ուստի կրթության որակի կորուստ թույլ չտալու և նոր համակարգի ակնկալվող արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է պահպանել հանրակրթության ամուր հիմքը՝ իր, 2 կարևորագույն արժեքներով:

Բ. Կրթական մակարդակների խոր տարբերությունը դրանք կրողների օտարացման պատճառ է դառնում: Հայաստանի քաղաքական, տնտեսական և այլ վերափոխումներ հանգեցնում են սոցիալական կառուցվածքի փոփոխության՝ շերտավորելով հասարակությունը: Մոտ ապագայում ակնառու կդառնան հակասությունները ոչ միայն տարբեր խավերի միջև, այլև նույն խավի տարբեր սերունդների միջև՝ պայմանավորված նաև կրթական տարբերություններով: Ուստի հայրենաբնակ սերունդների՝ իբրև մշակութակիրների փոխըմբռնումը պահպանելու նպատակով նաև հանրակրթության նոր համակարգը պետք է արտածենք հնից՝ ժառանգելով հիմնակազմ սկզբունքները:

Միաժամանակ հրատապ է հանրակրթության նորացումը, որը ենթադրում է հին համակարգի թերություններից ձերբազատում և ժամանակի պահանջներին համապատասխան նոր արժեքների հանձնառում: Դրանք են՝ կրթության ժողովրդավարացում, ազատականացում, անհատականացում,

այլընտրանքայնություն և այլն: Այս արժեքների ներածումը անհրաժեշտ են դարձնում երկու կարևորագույն հանգամանքներ:

Ա. Կրթության համընդհանուր ճգնաժամի հաղթահարումը և միջազգային կրթական չափանիշների ձեռքբերումը: Այս իմաստով մեծագույն հիմնահարցը կրթության ժողովրդավարացումն է, որը ենթադրում է կրթության մատչելիության և ուսուցման սոցիալական իրական հավասար հնարավորությունների ապահովում: Կրթության այլընտրանքայնությունն ու անհատականացումը կոչված են բավարարելու աշակերտների պահանջմունքները ըստ նախասիրությունների: Սովորողներն իրավունք պետք է ունենան կամովին ընտրելու թե' ուսուցման ուղղությունը և թե՛ մի շարք առարկաներ՝ իրենց հակումներին և ապագա մասնագիտությանը համապատասխան: Այս իմաստով մեծ նշանակություն պիտի տրվի ավագ դպրոցում անհատական պատրաստության ծրագրերի և բովանդակությամբ, ծրագրերով, մանկավարժական ուրույն սկզբունքներով ու նպատակներով այլընտրանքային դպրոցների զարգացմանը:

Բ. Այս նոր արժեքները կրթության արևմտյան մոդելի բաղադրիչներ են, և Հայաստանի հանրակրթական նոր համակարգում դրանց ներառումը մեկ այլ նպատակ էլ ունի՝ պաշտպանել սփյուռքահայության շահը: Մեր հայրենակիցները տարբեր մշակույթների կրողներ են, ինչը թե' միջսերնդային, թե՛ ներհամայնքային ու միջհամայնքային և թե' հայության 2 հատվածների օտարացման պատճառ է: Միջազգային լավագույն փորձի յուրացումը համաչափելի կդարձնի մեր գիտելիքները, ապա և՝ կյանքը:

Հին և նոր արժեքների զուգորդումը, պետական և մասնավոր հաստատությունների համագոյակցումը, պարտադիր և կամընտրական առարկաների, հիմնարարության և ազատականության համատեղումը չպիտի վնասեն կրթության որակին: Ակնկալվող հակասությունները կարելի է կանխել, եթե ուսումնական պլաններում լավագույն հարաբերակցություն սահմանվի պարտադիր և կամընտրական դասընթացների միջև՝ I դեպքում ապահովելով աշակերտների տարբերացումը ըստ ընդունակությունների (հիմնարար կրթություն), II դեպքում՝ ըստ նախասիրությունների (ազատական կրթություն), ինչպես նաև հետևողականորեն իրագործվեն անհատական կրթական ծրագրերը:

Բացի այդ, պետք է սահմանել կրթական համազգային չափորոշիչներ և կրթության որակի վերահսկման մեխանիզմներ, որպեսզի դպրոցը, իբրև ռազմավարական ոլորտ, դուրս չմնա պետական վերահսկողությունից:

## 2. Հայագիտական առարկաների շարքի համազգային կրթական ծրագրի մշակում

Հայ անհատի կրթությունը, ինչպես արդեն նշվել է, պիտի խարսխվի ազգայինից դեպի համամարդկայինը սկզբունքի վրա, առավել ևս, որ հայկականությունը ոչ միայն չի հակադրվում համամարդկայինին, այլև նրա դրսևորումներից մեկն է: Հայ ժողովուրդը «իրոք շատ բան է տվել աշխարհի քաղաքակրթությանը և տվածի մեջ էլ ինձ համար ամենաթանկն ու ամենագեղեցիկը՝ իր այլասիրական ոգին» (Պ. Սևակ), մեկ այլ ձևակերպումով՝ «հայկական համամարդկայնությունը» (Դ. Դեմիրճյան): Մեր մշակույթի այս մեծագույն արժեքն է նաև երաշխավորում նրա վրա հիմնված կրթության համամարդկային բովանդակությունը:

Ասվածը կարևորվում է մեկ այլ առումով ևս: Համազգային տեսանկյունից հայությունն ստանում է խիստ տարբերակված կրթություն՝ պայմանավորված աշխարհագրական, քաղաքական, սոցիալ-մշակութային, կրթական-մեթոդական և այլ բազմազանությամբ: Ուստի կրթության մեջ ազգային ինտեգրացումը կարող են ապահովել հայագիտական առարկաները.

ա) միայն այս առարկաների համար է հնարավոր մշակել ըստ կարելվույն միասնական հանրակրթական ծրագրեր (նաև միօրյա վարժարանների սաների համար).

բ) դրանք են խթանելու ազգային ինքնագիտակցությունն ու արժանապատվությունը՝ ձևավորելով վաղվա հային և միաժամանակ ապահովելով հայ անհատի ընդունակություններին համապատասխան առավելագույն զարգացում և բարեկեցություն:

Ի՞նչ դեր է վերապահվում հայագիտական առարկաներից յուրաքանչյուրին այս կարևորագույն խնդիրը լուծելու գործում:

<u>I.</u> Հանրակրթության մեջ առանձնահատուկ է լեզվի դերը:

Նախ՝ հայոց պետականության կերտումը անշուշտ պիտի հիմնվի ազգային պետականության հայեցակարգի վրա, որը լեզվի միասնությունը դիտում է իբրև ազգային միասնության անփոփոխ պայման:

Զարգացման այս անցումային փուլում հատկապես սուր է զգացվում ազգային միասնության և

սահմանային (մարգինալ) խմբերի (հայության գաղթաշարժի ուժեղացման հետ կապված) ինտեգրացման անհրաժեշտությունը. այստեղ նույնպես մշակութային ինտեգրացնող դերը լեզվինն է. տարբեր լեզուներ և մշակույթներ կրող հայերի համար մայրենին ձեռք է բերում յուրատեսակ միջազգայինի կարգավիճակ:

Հանրապետությունում սոցիալ-տնտեսական վերափոխումները հանգեցնում են սոցիալական կառուցվածքի փոփոխության: Այս տարբերությունները խորանում են նաև նախկինում մայրենի լեզվի գործառությանը նպաստող կառույցներում՝ ընտանիքում և ուսումնական հաստատություններում: Առաջինն այժմ խրախուսում է այդ տարբերացումը, և լեզվի գաղափարախոսական դերի իրագործումը պիտի հանձնառի կրթության ոլորտը: Ընդ որում, հանրակրթական դպրոցում լեզվական քաղաքականության նպատակը պիտի լինի հայության հնարավորինս հավասարեցված լեզվական կրթության ապահովումը: Հայերենը, իբրև ազգային ընդհանրության բաղադրիչ, պիտի դառնա համընդհանուր հաղորդակցության միջոց՝ հնարավոր դարձնելով համազգային գաղափարների շրջանառումը: Դրան պիտի նպաստեն՝

ա) հայոց լեզվի ու գրականության միասնական ծրագրերը և պարտադիր ուսուցումը,
բ) լեզվի համազգային կրթական չափանիշների մշակումը,
գ) ուսուցման տարբերացված մեթոդիկայի մշակումը (լեզուն կրողների և չկրողների համար),
դ) միասնական ուղղագրության սահմանումը,
ե) գրաբարի ուսուցումը, արևմտահայերենի ու արևելահայերենի փոխադարձ ուսուցումը,
զ) հայերեն համակարգչային լեզուների մշակումը,
է) կրթությունը մայրենի լեզվով՝ առնվազն տարրական դպրոցի մակարդակով. բուն լեզվի ուսուցումը մինչև հանրակրթական պատրաստության լրումը,
ը) հայագիտական շարքի առարկաների ուսուցումը մայրենիով,
թ) մանկավարժի լեզվի մշակույթի կարևորումը,
ժ) լեզվի՝ իբրև մտածողության միջոցի զարգացումը,
ժա) հայերեն գիտական տերմինաբանության ուսուցումը:

II. Հայերենով բարձրամակարդակ կրթություն ստանալը, հաղորդակցումը նրա բուն էությանը և լեզվական սեփական «հայտնագործությունները» պիտի բարձրացնեն մայրենի լեզվի կշիռը և գերակայությունը յուրաքանչյուր հայի համար: Ըստ որում, լեզվի ուսուցումը պիտի հիմնվի գեղարվեստական գրականության վրա, որի դասավանդումը կազմակերպվելու է միանգամայն նորովի: Դրանում կարևորվելու են.

1. Ազգային ինքնիմացության կոչող և արժանապատվություն սերմանող գրողների ստեղծագործությունների ուսուցումը (Խորենացի, Աբովյան, Վարուժան, Սիամանթո, Չարենց, Սևակ և այլք)՝ այն արժեքների վերհանումով, որոնք խորհրդանշում են ազգային գոյության փիլիսոփայությունը:

2. Համաշխարհային գրականությունը հարստացնող և հայ ժողովրդի հպարտությունը հանդիսացող գրողների տեղի ու դերի գիտակցության ձևավորումը (Նարեկացուց մինչև Հրանտ Մաթևոսյան):

3. Ամբողջական հայ գրականության ուսուցումը. միասնական սկզբի, արևմտահայ ու արևելահայ գրականությունների մշակութային առանձնահատկությունների բացահայտումը և դրանց ճանաչողական դերի շեշտումը, կրթական չափանիշների մեջ դրանց ընդգրկումը՝ ընդհուպ մինչև ընդունելության քննություններ:

4. Արդի հայ գրականության այն ստեղծագործությունների ուսուցման կարևորում, որոնք ներառում են լեզվի երկու տարբերակների տարրեր՝ որպես ազգային մշակույթի առավել ամբողջական երևույթներ (օրինակ՝ Շանթի ստեղծագործությունը): Նպատակը վաղվա միասնական մշակույթը ստեղծողների ձևավորումն է:

III. Հայ մարդու ձևավորման մեջ առանձնահատուկ դեր ունի հայոց պատմությունը: Կարևոր է հատկապես հիմնավոր ծանոթությունն այն դեպքերին ու դեմքերին, որոնք արարեցին Հայաստան աշխարհը և դարձան ազգային ինքնագիտակցության խորհրդանիշեր: Հայ մանկավարժական միտքը, հիմնվելով Խորենացու և մյուսների ավանդների վրա, հայոց երևելիների մեջ հատկապես ընդգծում էր բնիկ հայ թագավորներին և փորձում նրանց օրինակով դաստիարակել երիտասարդ սերնդին: Այսօր դրան ավելանում են վերջին հարյուրամյակի պատմության և հայոց նոր պետականության կերտման դասերը:

IV. Հայրենիքը ճանաչելը, նրա բնաաշխարհագրական պայմաններին ու առանձնահատկություններին ծանոթանալը, միաժամանակ հիմնախնդիրներն իմանալն ու սերունդներին էկոլոգիապես անաղարտ բնօրրան ժառանգելու պատասխանատվություն հանձնառելը պիտի դառնան Հայաստանի աշխարհագրության ուսուցման նպատակները:

V. Կրթության բովանդակության մեջ ներառելի են նաև մշակույթի մյուս բաղադրիչները՝ ճարտարապետությունը, նկարչությունը, ներառյալ մանրանկարչությունը, և երաժշտությունը, որոնց միջազգայնորեն ընդունված անվանումներն իսկ ակնառու են դարձնում նրանց ինքնատիպությունն ու ազգային դրոշմը՝ հայկական ճարտարապետություն, հայկական երաժշտություն, հայ նկարչություն: Այս արժեքներին հաղորդակցվելուն պետք է ծառայեն թե՛ դասաժամերը (կերպարվեստի, երաժշտության և այլն), թե՛ ազատ ժամանակը: Դրանց դերը կարևորվում է ոչ միայն սովորողների գիտելիքների, հույզերի և այլ որակների ձևավորման առումով. մշակույթի այս ոլորտներին առնչվելը խթանում է անձի ստեղծագործելու ունակությունը:

VI. Այսօր դպրոցում կարևորագույն դեր է վերապահվում կրոնին երկու իմաստով: Նախ՝ իբրև հոգևոր գործոն՝ այն պետք է նպաստի կրթության հումանացմանը: Բանականության ժամանակակից հաղթարշավի պայմաններում կրոնականը հոգևոր-արժեքաբանական գործոն է դառնում: Եվ իբրև հոգևոր արժեք՝ այն առանձնահատուկ դեր ունի մարդկայինի գոյավորման մեջ: Երկրորդ՝ հայ եկեղեցու ազգապահպան առաքելությունը շարունակվում է, և նրա հոգևոր ավանդները ժամանակակից էքսկիրներին կարող են ժառանգվել այսօրվա պահանջներին համապատասխան:

Այսպիսով՝ հայագիտական առարկաների շարքն ունի ընդգրկուն տարրապատկեր, և միայն համակարգված ծրագիրը կարող է կատարել իրեն վերապահվող դերը:

### 3. Դասագրքերի նորացում. բովանդակության մեջ ազգային ինքնիմացության ներածում

Հանրակրթության վերափոխման նպատակներին ու սկզբունքներին համապատասխան՝ դասագրքերը պետք է նորացվեն: Դրանց ընդհանուր պահանջներ են ներկայացվում երկու տեսանկյունից:

I. Դիդակտիկ

1. Դասագրքերի ստեղծումն անմիջաբար առնչվում է ուսումնական ծրագրերին: Ցայժմ դրանք կազմվել են առարկայական ձևով՝ երեխաներին մատուցելով առանձին գիտելիքների լոկ պատառիկներ: Սակայն նոր խնդիրների տեսանկյունից լուրջ քննարկման է արժանի միջին և ավագ դպրոցի ծրագրերի նորացման սկզբունքը՝ առարկայականից անցնելով միջառարկայականի: Դա կնպաստի մի շարք հարցերի լուծմանը: Նախ՝ աշխարհի ամբողջական և ոչ հատվածական ընկալմանը՝ բնական գիտությունների պարագայում: Երկրորդ՝ հայ մշակույթն ու պատմությունը համաշխարհային քաղաքակրթության զարգացման ընդհանուր հենքին դիտարկելուն՝ հայագիտական առարկաների հետ կապված: Երրորդ՝ տեղեկատվության սրընթաց աճի պայմաններում երեխաների ուսումնական բեռնվածությունը թեթևացնելուն: Չորրորդ՝ երեխաներին կսովորեցնի մտածել և գործել գիտությունների սահմանագծին, որտեղ կատարվում են արդի հիմնական հայտնագործությունները: Անշուշտ, ինտեգրացված դասընթացներին զուգահեռ պահպանվում է առարկայական ուսուցումը՝ առավել ընդունակ երեխաներին հնարավորություն տալով ձեռք բերելու հիմնարար գիտելիքներ նախասիրած առարկաներից:

2. Դասագրքերը պետք է լինեն արդիական և ունենան մասնագիտական բարձր մակարդակ, աշակերտներին տան հիմնականում ընդհանուր կրթություն և դրդեն նրանց մտածել: Սեփական նման դասագրքերի բացակայության դեպքում անհրաժեշտաբար պետք է թարգմանել օտարալեզու լավագույն դասագրքերը:

II. Ազգային

1. Անշուշտ միամտություն է կարծել, թե հայության քաղաքական, սոցիալական, կրթական և այլ տարբերացման պայմաններում հնարավոր կլինի ապահովել միասնական ուսումնական ծրագրեր և դասագրքեր (թեկուզև Հայաստանի դպրոցների և Սփյուռքի հայկական վարժարանների համար): Անդրանիկ ջանքերն ուղղված պետք է լինեն միասնացնելու ընդհանուր սկզբունքները, հիմնական օրինաչափությունները: Ըստ երևույթին, պետք է սկսել դասագրքերի առկա ֆոնդը և հնարավորություններն ուսումնասիրելուց: Օրինակ՝ սփյուռքահայ մի շարք վարժարաններ օգտագործում են Հայաստանի դպրոցների դասագրքեր (Այբբենարան, Ընթերցարան և այլն). բնականաբար, առաջիկայում դրանք վերահրատարակելիս հեղինակներն արդեն պիտի նկատի

ունենան նաև սփյուռքահայ երեխային և դասագրքեր ներմուծեն հայ մանչուկին հարազատ նյութեր: Միաժամանակ արդյունավետ կարող է լինել օտար լեզուների արտերկրյա դասագրքերի լրիվ կամ մասնակի գործածումը մեզանում՝ համապատասխան վերափոխումներով:

2. Հայագիտական առարկաների դասագրքերը, որ ստեղծվելու են հայության գիտական ու մանկավարժական մտքի համատեղ ջանքերով, պետք է՝

ա) լինեն ապաքաղաքականացված, ներառեն հնարավորինս ընդհանուր շերտեր, որպեսզի բավարարեն հայության մեծագույն մասին.

բ) անհրաժեշտության դեպքում ունենան արևմտահայ և արևելահայ տարբերակներ (հիշենք նախադեպերը՝ Թումանյանի «Լուսաբեր»-ները, Արամ Անտոնյանի «Հայ միտք» ընթերցարանը):

3. Բնագիտական առարկաների դասագրքերին ներկայացվում է սկզբունքորեն նոր պահանջ:

ա). Ազգային արժանապատվության ձևավորումը, սնվելով զուտ ավանդական հայագիտական աղբյուրներից, մշակութաբանական առումով ցայսօր թերի է եղել: Հայեցի կրթություն ապահովելու համար հանրակրթության բնագիտական բաղադրիչի մեջ նույնպես պետք է ներածել ազգային ոգի՝ վերականգնելով ու նորովի գնահատելով մեր ժողովրդի հանիրավի անտեսված արժեքներն այս ոլորտում: Այստեղ հրատապ է մի խնդիր՝ սեփական դասագրքերի ստեղծում և թարգմանություն՝ համապատասխան «ներմուծումներով»: Տարիներ շարունակ բնագիտության դասագրքերում մոռացված է եղել հայերի ներդրումը գիտության համաշխարհային ֆոնդ: Ծանոթությունը Դ. Անհաղթին, Ա. Շիրակացուն, Գ. Մագիստրոսին, Մ. Հերացուն, Հ. Ադամյանին, Հ. Չամչյանին, Վ. Համբարձումյանին, Ալիխանյան եղբայրներին, Ս. Մերգելյանին, Գ. Ասկարյանին և մյուս հայ բնագետներին, նրանց վաստակի ըստ արժանվույն գնահատումը պիտի վերաիմաստավորեն հայ ժողովրդի երախտիքը՝ խթանելով հայերի ազգային հպարտությունը:

Սփյուռքի օտար վարժարաններ հաճախող երեխաների համար համապատասխանորեն կարելի է ստեղծել «Հայ բնագետներ» օժանդակ ձեռնարկը՝ նպատակամիտորեն լրացնելու սփյուռքահայ երեխայի բնագիտական կրթության պակասը:

բ). Կրթության ազգային խնդիրների լուծման տեսանկյունից բնագիտական առարկաների դասագրքերի կարևորությունն այն է, որ գիտության հիշյալ ոլորտում հայերս ընդգծված տարածայնություններ չունենք, և առավել դյուրանում է միասնական դասագրքերի ստեղծումը:

### 4. Դաստիարակության նոր հայեցակարգի մշակում և գործառում

Հայ դպրոցը իրեն վերապահվող հանձնառությունը կարող է իրագործել՝ հիմնվելով դաստիարակության նոր հայեցակարգի վրա: Վերջինս ներառում է հետևյալ հիմնադրույթները:

1. Հիմնարար գիտելիքներ, ստեղծագործական մտածողություն և հայ ժողովրդին բնորոշ ու նրա լավագույն ավանդույթներից բխող բարոյական բարձր հատկանիշներ ունեցող էթնոկիրների ձևավորումը ենթադրում է նոր մոտեցում կրթության բաղադրիչների՝ ուսուցման և դաստիարակության առնչությանը՝ մտածողության և վարքի ձևավորումը դիտելով միասնական գործընթաց: Ազգային մտածողության և բնավորության միասնական ձևավորման հիմքում դրվում է այն սկզբունքը, որ ինտելեկտը դեռևս ամեն ինչ չէ: Կրթության բուն նպատակն է՝ «ինտելեկտ գումարած բնավորություն»:

2. Այս խնդրի իրագործմանն է նվիրված նոր սերնդի ազգային մշակութացումը, որը ենթադրում է.

ա) Ազգային բնավորության ձևավորում և հատկապես բարոյական գործոնի խթանում, ինչը պիտի օգնի վերականգնելու հայի տոհմիկ կերպարը՝ այն դարձնելով հայ դպրոցի տարբերիչ գիծը: Ազգային բնավորության ձևավորումը խիստ կարևորվում է, քանզի բոլոր առումներով մեզ հոգով ուժեղ սերունդ է հարկավոր՝ ազգային ավանդներն իմացող, մշակույթը գնահատող, սիրող ու կրող:

Այս հարցում դպրոցը և ընտանիքը պետք է սերտորեն համագործակցեն: Անհրաժեշտ է ընտանեկան դաստիարակության առաքինությունը մտցնել դպրոցական մթնոլորտ, իսկ դպրոցի ինքնակարգապահությունն էլ իր հերթին՝ ընտանիք: Նման փոխազդեցության հիմքում պիտի դրվի հեղինակության պաշտամունքը, դպրոցում՝ ուսուցչի, տանը՝ ծնողի: Եվ այդ հեղինակությունները պիտի անառարկելի լինեն, ինչը մեր ազգային գծերից է: Անհատական բարոյական հատկանիշների դաստիարակությունից պետք է անցնել խմբային վարքի դաստիարակության՝ նվիրվածություն իր խմբին, դասարանին, դպրոցին: Պետք է էթնոկիրների մեջ նույն արժեքների հանդեպ նույնական վերաբերմունք մշակել, արժեքներ, որոնք պետք է դառնան յուրաքանչյուրինը: Դրան պիտի նպատակամղվի նոր սերնդի ազգային սիմվոլային սոցիալականացումը:

բ) Ազգային մտածողությամբ և ազգային բնավորությամբ անհատի ձևավորմանը պիտի

նպատակամղվի ազգային հպարտության մշակումը՝ որպես ուսումնատենչություն արթնացնելու և գալիքի կերտման դժվարությունը հանձնառելու հզոր ազդակ:

Հայ երեխան իր ազգային պատկանելությամբ հպարտանալու հիմքեր պիտի ունենա, իսկ դրանք գիտելիքներն են: Այս իմաստով կարևորվում է ոչ թե միտումնավոր քարոզչությունը, այլ համակարգված գիտական գիտելիքների ուսուցումը, սեփական մշակույթի, այդ թվում նաև գիտության, հիմնավոր իմացությունը:

Աշակերտների ազգային մշակութացումը, ազգային հպարտություն ձևավորելուց բացի, պիտի բացահայտի այն երևույթը, որ կոչվում է «հայկական համամարդկայնություն»: Սրա հետ կապված անհրաժեշտ է բացահայտել համաշխարհային քաղաքակրթության մեջ հայերի ներդրումը և նրա հենքին դիտարկել հայ մշակույթի ու պատմության զարգացումը:

Մշակույթի ազգային ու համամարդկային բովանդակությունը կարող է երաշխավորել ոչ միայն կրթության նոր որակ, այլև ազգային արժանապատվություն ու մտածելակերպ ունեցող այնպիսի մարդ-քաղաքացու դաստիարակություն, որն ունակ է ընկալել համամարդկայինը, ճանաչել ու հարգել բոլոր ժողովուրդներին, գնահատել նրանց ստեղծած արժեքները:

3. Նշված հիմնադրույթները հնարավոր է իրագործել համագործակցության մանկավարժության ու դաստիարակության գործընթացի մարդկայնացման սկզբունքներով: Համագործակցության մանկավարժությունը նախապատվելի է այն իմաստով, որ հայությանը բնորոշ մի շարք հատկանիշներ՝ ազատականություն, գթասիրտություն, կարեկցանք և այլն, համահունչ են նրա գաղափարներին: Հանրակրթության հիմքում դրվող սկզբունքները՝ ժողովրդավարացումն ու մարդկայնացումը, անհրաժեշտաբար փոխում են դաստիարակության ամբողջ համակարգը՝ նոր պահանջներ ներկայացնելով աշակերտ-ուսուցիչ հարաբերությանը:

Հիմնարար գիտելիքները, ինքնուրույն մտածողությունը և ազգային բնավորությունը ոչ միայն կձևավորեն արժանավոր սերունդ, այլև կօգնեն նրան դիմակայելու օտար ներգործություններին՝ քաղաքական, տնտեսական-կրոնական, տեղեկատվական և այլն:

## 5. Մանկավարժական կրթության համալսարանացում

### Ա. Կառուցվածքը

Դպրոցի վերափոխման համալիրում իր կարևորությամբ առանձնանում է մանկավարժական կրթությունը: Նրա զարգացումը, ձեռք բերելով առաջանցիկ բնույթ, պետք է ապահովի հասարակության և հանրակրթության ներդաշնակ փոխհամագործակցությունը:

Դպրոցի ըստ ամենայնի վերափոխումը կարող են իրականացնել նոր որակի մանկավարժները՝ լայնախոհ, բազմագետ, սեփական ինտելեկտ ունեցող մասնագետներ, որպիսիք հնարավոր է պատրաստել միայն համալսարանում:

Հայկական մանկավարժական համալսարանի համար նպատակահարմար է դիտվում միջազգային այն մոդելը, որը ենթադրում է երկփուլ պատրաստություն: Ապագա մանկավարժները նախ ստանում են ընդհանուր հենքային համալսարանական կրթություն պրոֆիլային առարկաների գծով (քառամյա ուսուցում), այնուհետև հետդիպլոմային մակարդակով ձեռք են բերում մասնագիտական պատրաստություն (երկամյա ուսուցում):

Նման ընտրությունը լուծում է մի շարք հիմնահարցեր.

1. Ապահովում է հենքային բարձր պատրաստությունը և մանկավարժական պատրաստության գործնական բնույթը:

2. Սփյուռքահայ դպրոցները համալրում է ուսուցիչներով. օտար համալսարաններում բարձրագույն կրթություն ստացած հայ երիտասարդները որպես մանկավարժ կարող են վերաորակավորվել մանկավարժության բնագավառում՝ նաև օտարերկրյա համալսարանների հայագիտական կենտրոններում:

3. Ապահովում է այնպիսի պատրաստություն, որի կրողները կարողանան համադրել կրթության ազգային խնդիրները, որ դրված են հասարակության գլխավոր կրթական կառույցների՝ ընտանիքի, դպրոցի ու համալսարանի առջև, և լավագույնս լուծել դրանք:

4. Համալսարանական նման կառույցը կարող է հիմք դառնալ մանկավարժական կրթության բովանդակային վերափոխման այն հայեցակարգն իրագործելու համար, որը հանգում է հայ ուսուցչի մոդելի ստեղծմանը:

Բ. Բովանդակությունը

Հայ ուսուցչի մոդելը ներառում է 3 հիմնական կառուցատարր՝ առարկայական (հիմնարար) ու մանկավարժական (հոգեբանական-մեթոդաբանական) պատրաստություն և անձնային որակների զարգացում:

Ուսուցչի միակ իրական հեղինակությունը գիտելիքի հեղինակությունն է: Ուստի առարկայական պատրաստությունը պիտի դառնա մանկավարժական կրթության առանցքը: Դա պետք է ապահովվի մի շարք վերափոխումներով՝ բարձրացնել կրթական չափանիշները պատրաստության բոլոր մակարդակներում, մանկավարժության ոլորտ ներգրավել տաղանդավոր երիտասարդների, հայ ուսուցչի կարգավիճակը դարձնել ցանկալի՝ սոցիալական ապահովման և քաղաքացիական մի շարք արտոնություններ սահմանելով:

Հիմնարար կրթությունը նաև պարտադիր պայման է մանկավարժական վարպետություն ձեռք բերելու համար: Այս պատրաստությունը տարբերացվում է ըստ կրթական հաստատությունների տեսակների, մասնագիտությունների և տեղային առանձնահատկությունների (լրիվ միջնակարգ դպրոց, ոչ լրակազմ հենքային և միօրյա դպրոցներ): Բայց կարևորագույն խնդիրն այս դեպքում ուսուցչի մեջ մեթոդաբանական կուլտուրայի ձևավորումն է՝ որպես հետագա ինքնակրթության արդյունավետ միջոցի:

Հանրակրթության համակարգում ավտորիտար մանկավարժությունն աստիճանաբար տեղի է տալիս համագործակցության մանկավարժության: Այս պայմաններում աշխատելու համար ուսուցչին անհրաժեշտ են անձնային այլ որակներ՝ լայն կրթվածություն, խորագիտություն, խոսքի բարձր մշակույթ: Նշված հատկանիշներն առավել նախապատվելի են սփյուռքահայ համայնքում, քանզի այստեղ ուսուցիչը հաճախ մշակույթի միակ լիարժեք կրողն է, իսկ դպրոցը՝ մշակութային հիմնական միջավայրը:

Ուսուցչի անձի զարգացմանը պիտի միտվեն ընդհանուր մշակութային պատրաստությունը և կրթության մարդկայնացումը: Իսկ դրանք միայն գիտելիքների համակարգ չեն. մշակութային արժեքները նաև հաղորդակցման կարևորագույն միջոց են, մարդկային ներդաշնակ հարաբերությունների ապահովման հիմք: Նաև այս իմաստով է արժևորվում ուսուցչի խոսքի մշակույթը, քանզի լեզուն և՛ հաղորդակցման միջոց է, և՛ մտածողություն: Խոսքը միաժամանակ բնութագրում է անձի հոգևոր աշխարհը, կրթվածության աստիճանն ու խորագիտությունը: Ուրեմն՝ ուսուցչի պատրաստության բոլոր կողմերի համալիր վերափոխումը միայն կարող է ապահովել լեզվական պատշաճ մակարդակ:

Միայն այսպիսի գիտելիքներ ունեցող ուսուցիչը, երեխաների դաստիարակությունը կողմնորոշելով դեպի երկու տեսակի արժեքներ՝ անհատական գիտակցության արթնացում և հարգանք մշակութային ժառանգության նկատմամբ, կարող է ձևավորել անձնային անհրաժեշտ որակներով քաղաքացիներ:

Հանրակրթությանը և մանկավարժական կրթությանը վերապահված է համատեղ իրականացնել Հայաստանի մտավոր, բարոյական ու ֆիզիկական բարձր որակներով քաղաքացիների պատրաստման և բնակչության համընդհանուր հանրակրթական պատշաճ մակարդակի ապահովման գործը:

## 6. Ոչ լրակազմ դպրոցները որպես ժողովրդագրական հիմնահարցի կրթական բաղադրիչ

Ժողովրդագրական գործոնի անցանկալի, բայց ցավոք մշտագո ներկայությունը մեզանում ամենուր է՝ կրթության պարագայում սրելով ոչ լրակազմ դպրոցների հիմնահարցը: Սփյուռքում այն պայմանավորված է համայնքների խիստ շարժունությամբ և փոփոխությամբ, փոքրությամբ և մասնատվածությամբ: Հայաստանում այդ երևույթը նախկինում կապված էր լեռնային գյուղերի դատարկման հետ: Հիմնահարցը այժմ սրում են մի շարք պատճառներ.

ա) լքված գյուղերի վերածնումը,

բ) փախստականների վերաբնակեցումը,

գ) բնակչության արտագաղթը:

Ոչ լրակազմ դպրոցը, որը տալիս է հենքային միջնակարգ կրթություն, բնորոշ է թե՛ Հայաստանին, թե՛ Սփյուռքին: Հանրապետությունում հաշվվում է 200-ից ավելի դպրոց, որոնց աշակերտական համակազմը չի անցնում 100 մարդուց: Այս դպրոցների շրջանավարտները սովորաբար ունենում են հանրակրթական ցածր պատրաստություն, ետ են մնում ընդհանուր զարգացումով: Հիմնական պատճառներից մեկը ուսուցիչների պատրաստության անբավարար մակարդակն է: Մանկավարժական բուհում անտեսվում են նման դպրոցների յուրահատկությունները, իսկ դպրոցում էլ աշխատանքային թերբեռնվածությունը և այսպես կոչված մասնագիտական մենությունը բացասաբար են անդրադառնում ուսուցչի պատրաստության մակարդակի վրա:

Հենքային ոչ լրակազմ դպրոցի հիմնախնդրի լուծմանը պիտի միտվեն՝
ա) հանրակրթության ուրույն բովանդակության սահմանումը,
բ) համապատասխան մանկավարժական կադրերի պատրաստումը,
գ) ուսուցման տարածքային կազմակերպումը,
դ) բնակչության շարժի վերահսկումը:

Առաջինը հանգում է այս դպրոցների համար յուրահատուկ ուսումնական պլանների ու ծրագրերի և ուսուցման մեթոդիկայի ստեղծմանը՝ հնարավորինս ինտեգրացնելով դասընթացները կամ ուսուցումը կազմակերպելով միացյալ դասարաններով: Միայն պիտի չվտանգել շրջանավարտների ապագան:

Երկրորդ խնդրի լուծումը հասցեագրվում է մանկավարժական կրթությանը: Նկատի առնելով ոչ լրակազմ դպրոցում ուսումնական գործընթացի յուրահատկությունները՝ ուսուցիչների համար պետք է սահմանել հիմնարար կրթության և հոգեբանական պատրաստության ուրույն բովանդակություն:

Նման դպրոցում ուսուցիչը սովորաբար դասավանդում է 4 - 5 հարակից առարկաներ, ուստի անհրաժեշտ է պատրաստել լայն պրոֆիլի մասնագետներ՝ հումանիտար առարկաների ուսուցիչ, բնագիտական առարկաների ուսուցիչ: Այս դեպքում մասնագիտական պատրաստությունն առանձնապես չի վնասվի, որովհետև 8-ամյա դպրոցի (ինչպիսիք ոչ լրակազմ դպրոցներն են) ծրագրերն ու պահանջները սահմանափակ են:

Մանկավարժական կրթության մյուս յուրահատկությունը վերաբերում է ուսուցման մեթոդիկային: Ոչ լրակազմ դպրոցում ուսուցիչն աշխատում է փոքր խմբի հետ (մինչդեռ պատրաստված է մեծ խմբի համար): Փոքր խմբում երեխաների շփման սահմանափակվածությունը ճնշում է սովորողի խոսքի ու անձի զարգացումը: Նա անվերջ ուսուցչի տեսադաշտում է, ստիպված է անընդհատ գործուն աշխատանք կատարել և շուտ է հոգնում: Փոքր խմբի հետ աշխատելու համար ուսուցիչը պետք է ձեռք բերի հոգեբանամանկավարժական յուրահատուկ հմտություններ, լավ տիրապետի անհատական ուսուցման մեթոդիկային: Այս իմաստով ոչ լրակազմ դպրոցում ուսուցիչը նաև ստեղծագործելու, ուսուցման ժամանակակից մեթոդները փորձարկելու լավագույն հնարավորություն ունի:

Հիմնախնդրի լուծմանը կօգնեն նաև մանկավարժական բուհի ուսանողական համակազմի ճիշտ ընտրությունը՝ ներգրավելով հատկապես գյուղական վայրերի ու համայնքների ներկայացուցիչների, և մանկավարժական պրակտիկայի կազմակերպումը ոչ լրակազմ դպրոցում:

Հարցի կարևորությունը պահանջում է համապարփակ ծրագիր՝ պահանջներ ներկայացնելով նաև հանրակրթության կառավարման ոլորտին: Այս իմաստով ծառանում է ուսուցման տարածքային կազմակերպումը՝ մերձակա բնակավայրերի ոչ լրակազմ դպրոցները վերակազմելու լրակազմ դպրոցի:

Ոչ լրակազմ դպրոցների հիմնախնդիրը հայության համար կարևոր իր ժողովրդագրական արժեքով դուրս է գալիս զուտ կրթական ոլորտից: Ուստի նրա լուծմանը պիտի նպատակամղվեն նաև քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ միջոցներ՝ վերահսկելու բնակչության շարժը և ապահովելու հնարավորինս կայուն համայնք:

Ոչ լրակազմ դպրոցի մեկ այլ՝ ոչ հենքային տարատեսակը առավելապես բնորոշ է Սփյուռքին: Այդպիսիք են օտարալեզու դպրոց հաճախող հայ երեխաների համար կազմակերպվող միօրյա վարժարանները: Հայության ազգային ինքնագիտակցության վերելքով պայմանավորված՝ աճում է նման վարժարանների թիվը և դերը: Համայնքները յուրովի լուծում են նման դպրոցների հետ կապված խնդիրները՝ իրենց պահանջմունքներին համապատասխան: Բայց, բնականաբար, պետք է այս վարժարանների համար ստեղծել որոշակի ծրագրեր, այդ թվում հայագիտական առարկաների շարքի հնարավորինս ինտեգրացված և մշակութացված հիմնակազմ ծրագիր՝ վարժարանների լավագույն ուսուցիչների մասնակցությամբ:

Ոչ լրակազմ դպրոցների հիմնախնդիրը՝ հենքային թե ոչ հենքային, մեկ այլ կողմ էլ ունի: Նման համայնքներում դպրոցը սովորաբար մշակութային միակ միջավայրն է և ստանձնում է մի շարք այլ գործառույթներ՝ ուժեղացնելով ներգործությունը ընտանիքի վրա և առավելապես նպաստելով բնակչության հաղորդակցման ընդլայնմանը: Ուստի ոչ լրակազմ դպրոցի մանկավարժների պատրաստության մեջ պետք է նկատի ունենալ նաև համայնքի հետ աշխատելու կարողությունների մշակումը՝ միաժամանակ օգնելու լրացնել ուսուցչի մասնագիտական թերբեռնվածությունը:

Հիմնահարցի կարևորությունը և նրա՝ Հայաստանի ու Սփյուռքի համար համընդհանրությունը պարտադրում են միատեղել հայ մանկավարժների միտքն ու գործը՝ ի նպաստ կրթության ոլորտում առաջին համատեղ, միասնական ծրագրերի ստեղծման:

## 7. Ներազգային ու միջազգային հաղորդակցության հիմքի ապահովում

Կրթության ինտեգրացնող ներուժն ամփոփված է գիտելիքների և արժեքների մեջ, որոնք հիմնականում համընդհանուր բովանդակություն ունեն: Սակայն կրթական որոշ բաղադրիչներ ներազգային ու միջազգային հաղորդակցության անմիջական գործառույթ ունեն՝ օտար լեզուների ուսուցումը, համակարգչային գրագիտությունը և կրթության էկոլոգացումը:

**ա) Օտար լեզուների ուսուցում**

Օտար լեզուների ուսուցումը, որպես հիմնահարց, առավելապես բնորոշ է Հայաստանին, քանզի սփյուռքահայերը մեծավ մասամբ ազատորեն տիրապետում են մի քանի լեզուների: Սփյուռքի համար նման խնդիր է հայերենի ուսուցումը:

Հանրապետության միջնակարգ դպրոցը պետք է ապահովի օտար լեզուների այնպիսի ուսուցում, որ շրջանավարտները կարողանան ազատորեն հաղորդակցվել առնվազն 2 օտար լեզուներով: Լեզվական նման պատրաստությունն ունի երկու հիմնական նպատակ:

ա) Գիտելիքների ձեռքբերում:

Տեղեկատվության ծավալի նման աճի պայմաններում հնարավոր չէ ապահովել նորագույն, ինչպես նաև ցարդ ստեղծված բոլոր գիտելիքների հայերեն մատուցում: Դա բացատրվում է ոչ միայն միջոցների պակասով, այլև այդ անելու աննպատակահարմարությամբ, քանզի անհրաժեշտություն է նաև անմիջաբար տվյալ մշակույթին հաղորդակցվելու հնարավորության ընձեռումը: Բացի այդ, երկրորդ լեզուն միայն հաղորդակցության միջոց չէ: Լեզուն նաև մտածողություն է, հետևաբար, մի քանի լեզուների միաժամանակյա յուրացումը աշակերտի մեջ մշակում է տարակերպ ստեղծագործական մտածողություն, զարգացնում նրա բանական կարողությունը, օգնում ազատվելու միակ լեզվի, ուրեմն և մտածողության միակ ձևի կապանքներից:

բ) Միջազգային ինտեգրացում:

Եթե մայրենին կոչված է ապահովելու հայության ներազգային ինտեգրացումը, ապա օտար լեզուն նրան դուրս պիտի բերի «միջազգային ուղեծիր»:

Օտար մշակույթներին հաղորդակցվելը բնորոշ և արգասավոր է եղել հայկական մշակույթի զարգացման բոլոր փուլերին: Մեր օրերում, երբ ընդլայնվել է միջազգային հաղորդակցությունը, ոչ միայն Հայաստան-Սփյուռք, այլև Հայաստան-Աշխարհ շրջանակներում, համաշխարհային արժեքներին առնչվելը, այդ թվում և կրթության ոլորտում, անհրաժեշտություն է (նկատի առնելով նաև միջազգային կրթական չափանիշների կարևորությունը Հայաստան-Սփյուռք հարաբերության համար): Ավելին՝ այն կարող է վերածվել ինտեգրացնող գործոնի: Քննարկելով արևմտահայ և արևելահայ գրականության պատմական շրջանակների զարմանալի զուգադիպության հարցը՝ հետազոտողները պատճառների թվում նշում են նաև համաշխարհային գրականության ու մշակույթի հետ հայ մտավորականության սերտ կապերը:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության տեղեկատվական ենթակառուցվածքի զարգացումը պայմանավորված է բնակչության՝ օտար լեզուների յուրացման պատշաճ մակարդակով՝ ապահովելու մեր քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ առնչությունները աշխարհի հետ:

Օտար լեզուների դպրոցական դասավանդման մակարդակի բարձրացման ավանդական մեթոդներից զատ, անհրաժեշտ է ձեռնարկել նոր միջոցներ, ըստ որում՝ օգտվելով նաև հանրապետության միջազգային ընդլայնվող հաղորդակցությունից: Հայաստանի՝ օտար լեզուների թեքում ունեցող դպրոցների և Սփյուռքի համապատասխան (ըստ երկրների) վարժարանների սովորողների և ուսուցիչների փոխանակումը երկուստեք օգտակար կդառնա մի շարք առումներով: Մանկավարժների փոխանակումը կնպաստի լեզուների ուսուցման նոր մեթոդների, սկզբունքների փոխիրազեկմանը՝ լրացնելով նաև որակյալ ուսուցիչների պակասը:

**բ) Համակարգչային գրագիտություն**

Կյանքի զարգացման արագընթաց ռիթմը, գիտելիքների ծավալի աճը, կրթության ինտենսիվացումն ու անհատականացումն անհրաժեշտաբար պահանջում են բնակչության համընդհանուր համակարգչային գրագիտություն: Վերջինս ծառայելու է որպես միջոց՝

ա) անձի ալգորիթմական մտածողության հիմքի զարգացման,

բ) միջազգային համակարգչային ցանցերին միանալու:

Առաջինն ուղղված է մարդու անհատականության զարգացմանը: Համակարգչային գրագիտությունն ապահովում է անձի ալգորիթմական մտածողությունը, փոխում գիտությունների հիմունքները յուրացնելու ուղիները, հնարավոր դարձնում մարդու կողմից յուրաքանչյուր իրադրության մոդելավորում և արտասովոր հնարավորություններ ստեղծում տեղեկատվության համար, օգնում նորովի փոխհարաբերվելու գիտելիքների հետ:

Երկրորդը, բնականաբար, նորից առնչվում է ինտեգրացմանը: Համաշխարհային հանրությունն արդեն ստեղծել է անմիջաբար և հեռավորապես փոխհարաբերվելու միջոցներ՝ միջազգային համակարգչային տարբեր, այդ թվում և կրթական ցանցեր: Հայաստանն արդեն բաժանորդագրվել է դրանցից մեկին՝ Ինտերնետին: Այդ կապերն ընդլայնելու և իրավահավասար բաժանորդ դառնալու պայմաններից մեկը հանրակրթության համակարգչայնացումն է:

Հայության համար համակարգչային գրագիտությունը կարևոր նշանակություն ունի մի շարք առումներով.

1. Տարասփյուռ հայերի համար անմիջաբար առնչվելու հնարավորություն է ընձեռում: Միասնական կրթական համակարգի բացակայության պայմաններում համակարգչային կրթական ցանցերը կարող են որոշ չափով լրացնել այդ բացը:

2. Համակարգիչը յուրովսանն փոխարինում է դասագրքին: Հայության տարբեր հատվածներ սովորում են տարբեր դասագրքերով, և խիստ դժվար է միասնական դասագրքի թե' մտահղացումը, թե' իրագործումը: Բացի այդ, մի շարք երկրներում համակարգիչը մտել է երեխայի առօրյան, և դժվար է նրան վերադարձնել դասագրքին, օտարալեզու դպրոց հաճախող հային հրապուրել հայերեն դասագրքով՝ առավել ևս: Այս դեպքում համակարգչային հայերեն համապատասխան լեզուներն ու ծրագրերը, օգնելով երեխային ոչ միայն յուրացնել, այլև ստուգել յուրացումը, կրճատել դասաժամանակը և գիտելիքների մի մասը տիրապետել տանը՝ ինքնուրույնաբար, առավել մատչելի, ներգործուն ու հաճելի կդարձնեն ուսումնառությունը՝ հայ մանչուկին առինքնելով դեպի կրթությունն առհասարակ և հայեցի կրթությունը՝ մասնավորապես:

**գ) Կրթության էկոլոգացում**

Մի շարք հիմնահարցերի համընդհանուր բնույթի գիտակցումը մարդկությանը համախմբել է դրանց լուծման ուղղությամբ: Կրթության զարգացումն էլ, իբրև համընդհանուր հիմնահարց, չի սահմանափակվում տեղական նշանակությամբ, այլ պայմանավորում է յուրաքանչյուր երկրի մասնակցությունը միջազգային կյանքին: Աշխարհի ամբողջական հասկացումը կարող է ձեռք բերվել մշակույթի, գիտության, բարոյագիտության, գեղագիտության, տեխնոլոգիայի համադրմամբ, որը կարող է իրացվել միայն կրթության ոլորտում: Ուստի միայն կրթությունը կարող է ձևավորել մարդու սոցիալական, աշխարհայացքային, բարոյական, վարքային այնպիսի որակներ, որոնք անհրաժեշտ են այսօր և մանավանդ՝ վաղը, որպեսզի տնտեսական և գիտատեխնիկական առաջընթացը ծառայի մարդուն և ոչ թե վնասի, որպեսզի չխախտվի էկոլոգիական ներդաշնակությունն աշխարհում: Մոլորակի վրա կյանքի պահպանումը դառնում է համամարդկային արժեք՝ նորովի ներկայացնելով աշխարհի պատկերը, ինչն անխուսափելիորեն հանգեցնում է կրթության նորացման: Ըստ որում, այն ենթադրում է ոչ միայն հանրակրթության բովանդակություն նոր բաղադրիչի՝ էկոլոգիական կրթության ներածում, այլև ամբողջ կրթության էկոլոգացում: Դա նշանակում է ոչ միայն գիտելիքի յուրացում, այլև վարքի և հատկապես բարոյական պատասխանատվության մշակում:

Այսպիսի կրթությունը մասն է կազմում էկոլոգիական քաղաքականության, որը հայ ժողովրդի համար ստանում է գոյապայքարի նշակություն՝ կապված Հայաստանի բնաաշխարհագրական պայմանների, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունների հետ:

Կրթության էկոլոգացումը ներառում է կրթության բոլոր մակարդակները՝ ընդգրկելով և ընտանեկան կրթությունը:

Աշակերտների մեջ պետք է սերմանել այն գիտակցությունը, որ մարդկության գոյատևման հիմնական նախապայմանը բնությունն է: Իսկ բնությունից տրվող մարդկային կենսամիջոցներն անսպառ չեն: Դպրոցական բոլոր առարկաները պետք է առավելագույնս շոշափեն բնապահպանական հարցեր:

Միջնակարգ էկոլոգիական կրթության բովանդակության հիմքը բնության ամբողջականության կենտրոնական գաղափարն է, որից լիակատար չափով բացահայտվում է էկոլոգիական հիմնախնդրի կարևորությունը՝ սկսած էկոլոգիական բնագիտական հիմունքների ուսումնասիրումից մինչև բնապահպան գործնական կարողությունների զարգացումը:

Դպրոցական բնագիտական կրթության էկոլոգացումը միջին դպրոցում հնարավոր է առավել արդյունավետորեն իրագործել բնագիտության ինտեգրացված դասընթացի ներածումով:

Հանրակրթության էկոլոգացման նպատակն է ձևավորել էկոլոգիական նոր մտածողությամբ ու աշխարհայացքով օժտված սերունդ, որն ունակ լինի կանխել ազգին ու մարդկությանն սպառնացող աղետը:

Իր զարգացման համեմատաբար կարճ ժամանակաշրջանում «էկոլոգիա» հասկացությունը բնա-

պահպանությունից վերածեց մարդու, ազգի և քաղաքակրթության էկոլոգիայի՝ նրանցից յուրաքանչյուրին ստիպելով բնականոն կեցություն ապահովելու համար անպայմանորեն ու ներդաշնակորեն հարաբերվել իր նման և միջազգային հանրության հետ:

Այսպիսով՝ հանրակրթության նշված բաղադրիչները՝ օտար լեզուների ուսուցումը, համակարգչային գրագիտությունը և կրթության էկոլոգացումը, ունեն և՛ կրթական, և՛ սոցիալական բովանդակություն: Հանրակրթական նման պատրաստությունը, օժտելով հային համապատասխան գիտելիքներով և վարքային ու բարոյական պատշաճ որակներով, կընդլայնի նրա հաղորդակցությունը թե՛ ազգային, թե՛ միջազգային շրջանակներում՝ ի նպաստ ազգի զորացման:

## V. ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հանրակրթության համազգային կառավարում, բնականաբար, հնարավոր չէ իրագործել: Փաստորեն կառավարման անմիջական օբյեկտը Հայաստանի կրթական համակարգն է, սուբյեկտը՝ հանրապետության պետական իշխանությունները: Միայն աստիճանաբար պետք է կառավարումն օժտել այնպիսի յուրահատկություններով, որոնք նպաստեն ապագա համահայկական կառույցի հիմնարկմանը՝ համազգային ուղղվածություն տալ կրթության հիմնահարցերի լուծմանը և կառավարմանը որոշակի մասնակցության հնարավորություն ընձեռել Սփյուռքի ազգանպաստ ու իրազեկ ուժերին: Վերջիններիս իրագործումը հանգում է հետևյալին.

1. Սահմանել այնպիսի օրենքներ (թե՛ կրթության, թե՛ հարակից՝ լեզվի և այլ հարցերի մասին), որոնք՝

ա) հանրապետության կրթական համակարգը առավելագույնս մատչելի դարձնեն համայն հայության համար՝ ապահովելով համակարգի իրական ժողովրդավարացում.

բ) յուրաքանչյուր շրջանավարտի համար մատչելի դարձնեն այլ կրթահամակարգ՝ ձեռք բերելով միջազգային համապատասխան չափանիշներ.

գ) բուն համակարգը մշակեն այնպես, որ նրանում ուսանելը նպաստի հայության ներազգային ինտեգրացմանը (ընդունելության ծրագրերում, կրթական այլ չափորոշիչներում նաև սփյուռքահայության շահը հաշվի առնել):

2. Օրենսդրորեն հավասարակշռել հանրակրթության կառավարման կենտրոնացումն ու ապակենտրոնացումը. տեղական իշխանության մարմինների մասնակցությունը սահմանել այնպես, որ կրթության հիմնակազմ սկզբունքներն ու բովանդակությունը կախված չլինեն անհատներից. վարել համազգային կրթական քաղաքականություն:

3. Հանրակրթության որոշ հիմնարար սկզբունքների իրագործմամբ կազմակերպել նաև մեծահասակների կրթություն՝ կանխելու սերունդների օտարացումը:

4. Հանրակրթության պետական-ազգային չափորոշիչներ սահմանել դպրոցի 3 մակարդակների համար և նրանց գործողությունը տարածել բոլոր ուսումնական հաստատությունների վրա՝ անկախ սեփականության ձևից: Այն կապահովի՝ կրթության տերմինաբանության և ազգային վիճակագրության չափանիշների միասնությունը, կրթության բովանդակության պարտադիր նվազագույնը, կրթության մակարդակների հաջորդայնությունը, կրթական վկայագրերի համարժեքությունը, չափանիշների համապատասխանեցումը միջազգայինին, ոլորտի կառավարելիությունն ու վերահսկելիությունը:

5. Ապահովել հանրակրթության զարգացման ծրագրի իրագործման սոցիալ-հոգեբանական, ժողովրդագրական, քաղաքական հիմունքները՝ հնարավոր դարձնելով տարամշակույթ հայերի նույնական կամ համատեղ ուսուցումը:

6. Ստեղծել «Կրթություն» համազգային հիմնադրամ, որի նպատակներն են.

ա) ֆինանսապես ապահովել ծրագրի իրագործումը,

բ) կենտրոնացնել պետական, տեղական իշխանությունների, հասարակական կազմակերպությունների և անհատների կողմից հանրակրթությանը հատկացվող բոլոր միջոցները,

գ) միջոցների նպատակամետ օգտագործումով խթանել հանրակրթության համազգային խնդիրների լուծմանը:

Հիմնադրամի կոլեկտիվ (հայկական կրթօջախների) և անհատ (նախանձախնդիր անձանց) անդամների մասնակցությունը խթանելու նպատակով սահմանել.

ա) իրավունքներ. մասնակցել հանրակրթությանը վերաբերող հիմնարար հարցերի քննարկմանը և համազգային կրթական քաղաքականության մշակմանը,

բ) պարտավորություններ. յուրովսանն նպաստել Հայաստանում ու Սփյուռքում հանրակրթության զարգացման ծրագրերին և իրագործել մշակված համազգային կրթական քաղաքականությունը:

* * *

Հայաստանի հանրակրթական համակարգի վերափոխման հիմնադրույթների մշակումն իսկ, բացահայտելով ծրագրի գիտական, քաղաքական, իրավական, կազմակերպական-ֆինանսական, հոգեբանական, նույնիսկ ժողովրդագրական ապահովման անհրաժեշտությունը, ուրվագծում է այն մեծածավալ, երկարաժամկետ և ոչ դյուրին աշխատանքների տարրապատկերը, որոնց իրականացումը ի վերջո պիտի հանգեցնի ազգային հանրակրթական համակարգի գործառմանը:

Սակայն դրա համար բավարար չեն լոկ տեսական մշակումները: Ավելին՝ առանց այդ համակարգի համապարփակ, մանրակրկիտ մշակման և վերափոխումների իրականացման մեխանիզմների ստեղծման վտանգավոր է ձեռնարկել բուն գործը: Իսկ դրանք հանգում են հետևյալին.

ա) Հայաստանում և Սփյուռքում հանրակրթության արդի վիճակի վերլուծում և զարգացման հնարավորությունների ուսումնասիրում:

բ) Համաշխարհային փորձի (հատկապես հայահոծ համայնքներ ունեցող երկրների) հանգամանալի ուսումնասիրում և վերլուծում:

գ) Առաջարկվող միջոցառումների հետևանքների գիտական կանխատեսում:

դ) Համապարփակ մոդելների կառուցում և ուսումնասիրում:

ե) Համազգային հաղորդակցական-տեղեկատվական մեխանիզմի ստեղծում. այս առումով կարևորվում է հանրակրթության և համալսարանական կրթության սերտացումը՝ մեխանիզմի գործողության որոշակի պատասխանատվություն դնելով վերջինիս վրա, ինչպես նաև ներազգային կրթական համակարգչային ցանցերի ստեղծումը և հեռավորական ուսուցման կազմակերպումը:

զ) Հայրենիքի և Սփյուռքի այս գործի պատասխանատուների ու նախանձախնդիրների ջանքերը միատեղող աշխատանքային մարմնի հիմնում:

Այսպիսով՝ Հայաստանի հանրակրթական համակարգի վերափոխման այլընտրանքային ծրագիրը կոչված է նպաստելու ազգայնամետ զարգացման ներունակ համակարգի ձևավորմանը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. ՀԱՅՔ հաստատություն, Տեղեկագիր, թիվ 11, 1994, թիվ 14, 1996:
2. Հայաստան. մարդկային զարգացման զեկույց. Եր., 1995, Եր., 1996:
3. Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության բարեփոխման ուղենիշներ, Եր., 1995:
4. Սփյուռքահայ վարժարանների համաժողովի նյութեր, Նիցցա (Ֆրանսիա), 1996:
5. Tacis EES-Education Policy Advice-Armenia, Expert Report, 1996.
6. Образование в регионе Европы и Средней Азии, 1994.
7. Ամերիկա-2000. Կրթության ստրատեգիա, 1991:
8. Образование в современном мире, М., 1986.